Հավելված N 42
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գյուղատնտեսության
նախարարի
2019 թ. հուլիսի 26-ի N [illegible]-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.1-Մ2-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ Վարչության ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է անասնաբուծության իրավիճակի վերլուծությունների, խնդիրների վեր հանումը, գնահատումների ու կանխատեսումների, զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակումը և իրականացման ընթացքը,
2. իրականացնում է Վարչության անասնաբուծության ոլորտի գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթեր նախապատրաստումը, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը,
3. իրականացնում է անասնաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը,
4. իրականացնում է անասնաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակում և իրականացվող ծրագրերի ընթացքի ուսումնասիրություն,
5. իրականացնում է անասնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվություն,
6. իրականացնում է անասնաբուծական տնտեսությունների վերաբերյալ ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքները, բարձրացնում է ծառացած խնդիրները և առաջարկություն է ներկայացնում դրանց լուծման համար,
7. իրականացնում է հանրապետությունում անասնաբուծական մթերքների ծավալների կանխատեսումը, փաստացի տվյալների վերլուծությունը և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե էկոնոմիկայի [illegible]

ամփոփ տեղեկագրի ներկայացումը,
8. իրականացնում է անասնաբուծության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքելու և մշակելու նպատակով ուղեցույցների կազմման և մեթոդական աջակցության տրամադրումը,
9. իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացումը,
10. իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությունը,
11. իրականացնում է տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում անասնաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցությունը:

Իրավունքները՝

• Մշակել անասնաբուծության իրավիճակի վերլուծությունները, գնահատումների ու կանխատեսումների, զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները, ուսումնասիրել բացահայտված խնդիրները,
• Ներկայացնել առաջարկություններ Վարչության անասնաբուծության ոլորտների գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների, անասնաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,
• ուսումնասիրել անասնաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակված և իրականացվող ծրագրերը,
• Տրամադրել մասնագիտական խորհրդատվություն անասնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին,
• Ուսումնասիրել անասնաբուծական տնտեսությունների վերաբերյալ ստացված տվյալները, վերլուծության աշխատանքները, բարձրացնել ծառացած խնդիրները և ներկայացնել առաջարկություն դրանց լուծման համար,
• Ուսումնասիրել հանրապետությունում անասնաբուծական մթերքների ծավալների կանխատեսումները, փաստացի տվյալները և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե եռամսյակային պարբերականությամբ ներկայացվող ամփոփ տեղեկագրերը,
• Մշակել անասնաբուծության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները ուղեցույցները և տրամադրել մեթոդական աջակցություն,
• Ներկայացնել առաջարկություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկումների ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումներն ապահովելու վերաբերյալ,
• Մասնակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությանը,
• Մասնակցել տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում անասնաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը:

Պարտականությունները՝

• Ուսումնասիրել անասնաբուծության իրավիճակի վերլուծությունները, գնահատումների ու կանխատեսումների, զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները,
• Ստանալ առաջարկություններ Վարչության անասնաբուծության ոլորտի գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների, անասնաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների, անասնաբուծական տնտեսությունների վերաբերյալ ստացված տվյալների, վերլուծության աշխատանքների, ծառացած խնդիրների լուծման վերաբերյալ,
• ուսումնասիրել անասնաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակում և իրականացվող ծրագրերը,
• Ներկայացնել առաջարկություններ անասնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին տրամադրված մասնագիտական խորհրդատվությունների վերաբերյալ,
• Ներկայացնել հանրապետությունում անասնաբուծական մթերքների ծավալների կանխատեսումները, փաստացի տվյալները և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե եռամսյակային պարբերականությամբ ամփոփ տեղեկագրերը,
• Մշակել անասնաբուծության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալների ուղեցույցները և տրամադրել մեթոդական աջակցություն,
• Ներկայացնել առաջարկություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկումների ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումներն ապահովելու վերաբերյալ,
• Ներկայացնել առաջարկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտներին,
• Ներկայացնել առաջարկություններ տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում անասնաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկման վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Գյուղատնտեսական գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ագրոնոմիա և անասնաբուծություն
4	**Մասնագիտություն**	Անասնաբուծություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում

4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեություն որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: